

1.4. Աշխատանքի շուկայի ցուցանիշներ

1.4.1. Ձրադավաճություն

Տնտեսապես ակտիվ բնակչության միջին թվաքանակը հանրապետությունում 2004թ. հունվարին, ըստ գնահատման, կազմել է 1212.7 հազ. մարդ, որի 90.2%-ը կամ 1094.3 հազ. մարդ զբաղված են եղել տնտեսության մեջ, իսկ 9.8%-ը կամ 118.4 հազ. մարդ (միջինը ժամանակաշրջանի համար) չեն ունեցել աշխատանք, գրանցվել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «ՀՀ զբաղվածության ծառայություն» գործակալությունում և ստացել գործազուրկի կարգավիճակ:

2004թ. հունվարի վերջի դրությամբ վերոհիշյալ գործակալությունում հաշվառման կանգնած 148.2 հազ. աշխատանք փնտրողներից 98.9%-ը կամ 146.8 հազարը եղել են չզբաղվածներ: Գործազուրկի կարգավիճակ ստացել են չզբաղվածների 80.5%-ը կամ 118.2 հազ. մարդ: Տարեսկզբից աշխատանքի է տեղավորվել 0.5 հազ.մարդ, նրանցից կանայք՝ 53.6%:

2004թ. հունվարին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «ՀՀ զբաղվածության ծառայություն» գործակալությունում գրանցված 1.8 հազ. չզբաղվածներից 1.2 հազարը կամ 66.7%-ը ստացել են գործազուրկի կարգավիճակ: Նույն ժամանակամիջոցում հաշվառումից հանվել են 2.0 հազ. չզբաղված աշխատանք փնտրողներ, նրանցից 0.5 հազարը կամ 25.0%-ը՝ աշխատանքի տեղավորման պատճառով:

Աշխատուժի առաջարկն ըստ հանրապետության մարզերի¹, 2004թ. հունվարին

	Աշխատանք փնտրողների թվաքանակը		Նրանցից՝ չզբաղվածներ		Նրանցից՝ գործազուրկներ	
	ընդամենը, հազ. մարդ	2003թ. հունվարի նկատմամբ. %	ընդամենը, հազ. մարդ	2003թ. հունվարի նկատմամբ. %	ընդամենը, հազ. մարդ	2003թ. հունվարի նկատմամբ. %
ք.երևան	33.6	90.3	33.4	90.3	29.7	88.1
Արագածոտն	2.3	104.5	2.1	105.0	1.4	100.0
Արարատ	5.5	87.3	5.4	88.5	4.1	82.0
Արմավիր	8.2	97.6	8.2	97.6	5.4	91.5
Գեղարքունիք	8.5	97.7	8.3	97.6	6.0	95.2
Լոռի	27.1	104.6	26.9	104.7	21.8	101.4
Կոտայք	7.8	83.9	7.7	82.8	5.6	80.0
Շիրակ	31.0	95.4	30.9	95.7	25.2	92.0
Սյունիք	16.8	100.6	16.7	100.6	13.8	99.3
Վայոց ձոր	2.2	104.8	2.2	104.8	1.7	100.0
Տավուշ	5.2	108.3	5.0	108.7	3.5	100.0
Ընդամենը ՀՀ	148.2	96.2	146.8	97.1	118.2	116.4

Կանայք կազմել են պաշտոնապես գրանցված գործազուրկների 68.9%-ը: Նրանց տեսակարար կշիռը գործազուրկների ընդհանուր թվաքանակում 2003թ. հունվարի նկատմամբ աճել է 1.6%-ով: Աշխատուժի պաշտոնապես հայտարարված պահանջարկը 2004թ. հունվարի վերջին կազմել է 691 մարդ, այդ թվում՝ 78.9%-ը կամ 545-ը՝ բանվորական մասնագիտությունների նկատմամբ:

¹ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «ՀՀ զբաղվածության ծառայություն» գործակալության տվյալներով:

Մեկ թափուր աշխատատեղի ծանրաբեռնվածությունը կազմել է 212 չգբաղված մարդ՝ նախորդ ամսվա համեմատ աճելով 6.5%-ով, իսկ 2003թ. նույն ժամանակաշրջանի համեմատ՝ 9.3%-ով:

2004թ. հունվարին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «ՀՀ զբաղվածության ծառայություն» գործակալության միջնորդությամբ աշխատանքի տեղավորվել են 489 մարդ, որոնց 53.6%-ը կանայք:

Հանրապետությունում նպաստառու գործազուրկների թվաքանակը 2004թ. հունվարին կազմել է 5.4 հազ. մարդ, իսկ գործազրկության նպաստի միջին չափը՝ 3503 դրամ: Նույն ամսում դրամական օգնություն է ստացել 8.0 հազ. գործազուրկ: Դրամական օգնության միջին չափը կազմել է 1507 դրամ:

Գործազրկության մակարդակը, հաշվարկած որպես զբաղվածության տարածքային կենտրոններում պաշտոնապես գրանցված գործազուրկների և տնտեսապես ակտիվ բնակչության (զբաղվածներ և գործազուրկներ) հարաբերակցություն, 2004թ. հունվարին կազմել է 9.8% և 2003թ. հունվարի նկատմամբ նվազել է 0.6 տոկոսային կետով: